

հեռագրով և Թէ. Մեդու Հայաստանի. լրագրի միջոցաւ լուր հասնելով քաղաքս, տեղւոյս արժանապատիւ առաջնորդական Փոխանորդը այս նոր տարեմտին առաւօտեան ըստ պատշաճի աւուրն, համառօտ տեսնախօսութեան մէջ սոյն բերկրաւէտ լուրն եւս աւետեց մեր ժողովրդեանը. որոնց մեծ ուրախութեան զղայմունք և հոգեկան բերկրանք պատճառեց. վասն զի այդ մեծագումար առատածեռնութիւնը մէկ յատուկ նախախնամական ողորմութիւն և անակնկալ յաջողութեամբ էր իւրեանց մատաղահաս օրիորդաց բարեկիրթ դաստիարակութեան և օրինաւոր մայրեր պատրաստելու վերաբերութեամբ, որին խիստ շատ զգալի կարօտութիւն ունի մեր բաղդադուրկ մայր Հայաստանը:

Պատարագից յետոյ համախումբ հոգեւորական դասով կատարուեցաւ հոգեհանդիստ. որեւ, ինչպէս լսում ենք, կարգադրուած է իւրարանչիւր տարի եւս մէկ օր կատարել պատարագաւ. վասնորոյ և ես տեղւոյս հայազգի հասարակութեան այս մասով ունեցած բերկրաւէտ ուրախութեան և երախտամեծար զղացմանց ի լուր համօրէն ազգայնոց Թարգման լիւնելուս ուրախութեամբ լցուած, մեծայոյս եմ, Թէ Արարան եւս իւր հարազատ որդւոյ այս առաքինագործութեանց վերայ ուրախանալով պիտի բարեհաճի տեղւոյս ազգայնոց հետ բարեմաղթել որպէս նոյն Կտակարար Իշխանազն հանգուցելոյ առաքինի հոգւոյ Աստուածուստ վարձատրութիւն, նոյնպէս և նորա վսեմափայլ ազգատոհմի սոյնպիսի բարեգործութեամբ և յամայր ամօք յարատեւութեան համար ի պաշտօնութիւն Սուրբ Եկեղեցւոյ և ի պիտանաւորութիւն Ազգի:

Սպասելով յիշատակեալ ուսումնարանի բացման աւետելու ամենացանկալի ժամուն, մնամ մշտապէս և եռանդալին ցանկացող սոյնպիսի հոգեուրախ և ազգօգուտ լոյս:

Մկրտիչ Վարժ. Արարաջեանց.

ՆԱՄԱԿ ԱՍՏԲԱՆԱՆԻՑ.

. Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

ա. Աստրախանայ հայազգի վաճառական պարոն Կարապետ Զարարեան Գալստեանց ըստ հրաւիրանոց Հոգաբարձութեանս յՏ ներկայ ամսոյ համարաւ 4, ներկայացաւ ի սոյն, և ի վճար ստորագրեալ յամին 1867, մի հազար ռուբլի գումարի ի ժապաւինեալ տումարի ի նպաստ շինութեան նորոյ տան Գարոցի սրբոյ Կատարինեայ եկեղեցւոյ քաղաքիս

ինքնայօժար կամօք մատոյց զմի Թաղաւորական բանկի հինգ տոկոսաբեր բիլէթ 1860 ամի համարաւ 103,229, գումարաւ մի հազար ռուբլի ամաթի երկամեայ տոկոսեօք (այսինքն չորերին կուպոնօք) յայտնելով զցանկութիւն իւր Թէ զմայր գումար առաջարկեալ բիլէթի նուիրէ ի մշանջնաւոր սեպհականութիւն Գարոցաց. իսկ գտոկոսին ի վերայ ահար գումարի յամի ամի գործադրել ի պէտս պահպանութեանս այնոցիկ:

բ. Աստրախանայ հայ աստիճանաւոր Գրիգոր Զարարեան Բուդաղեանց նուիրեաց զ45 հասար «Վիհիւմ-Յել» բանաստեղծական մատեանս Յօրհանի Թարգմանեալ ի Գաղիացւոց լեզուէ ի հայ. ի 1863 ամի ի Մոսկով ի Մովսիսէ Բուդաղեանց, գումարաւ երեսուն և մի ռուբլի յիսուն կոպէկ արծաթի:

գ. Բաքուայ հայ Անարօն - բէկ Դասարեանց նուիրեաց յօգուտ Գարոցաց զեօթն ռուբլի արծաթի:

դ. Աստրախանայ հայ Յակովբ Հայրապետեան պարոն Կրանիլչիկեանց առաջի արար ի նուէր Գարոցաց զ38 հատ հեղբէն սաղմոս, զ78 հատ այբբենարան, զ7 հատ նոր կտակարան և զմի հատ յատուկ Բառգիրք հայկական լեզուի տպեալ ի Վենետիկ, գումարաւ քառասուն ռուբլի իննսուն կոպէկ արծաթ:

Աւստի Հոգաբարձութիւնն զկնի յայտնելոյ զգոհունակութիւն իւր վերոյիշեալ անձանց վասն այսօրինակ նուիրագործութեանց, մանաւանդ առաջնոյն նշանաւոր գումարօք, շնորհ ունի խոնարհաբար խնդրել ի Խմբագրութենէ «Արարատ» ամսագրի, հրատարակել զըրամաւոր նուիրագործութենէ պարոն Կարապետի Գալստեանց և Անարօն - բէկի Դասարեանց, և զընծայաբերութենէ պարոն Բուդաղեանց և Կրանիլչիկեանց զրենօք յօգուտ Գարոցաց Աստրախանայ, ի զիտութիւն բարենախանձ անդամոց ազգի Հայոց:

Հոգաբարձուք

Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց

Գրիգոր Սողոմոնեանց

Յովհաննէս Սարգսեանց

Սիմէօն Պօպօվեանց

Խաչատուր Գաղաշեանց

Սարգիս Բուրջալեանց

ի 24 Մարտի 1869 ամի

ԻՎ. Լաստախան:

ՆԱՄԱԿ ՀԻՆ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

. Խմբագրութեան «Արարատ» ամսագրի.

Հրամանաւ Նորին Վեհափառութեան, Տեառն և Տեառն ԳԵՌԳԱՅ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամե-